

ԻՄ ԱՇԱԿԵՐՏԵԼՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՄՈՒՇԻ Ս. ԿԱՐԱՊԵՏՈՒՄ

1. ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՓՈՒՄՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԵԼԵՐԻ ՀԵՏ



աթսունական թվականի գարնան
սկիզբն էր: Մի օր երևանի Կոնդ
կոշված թաղամասից իշնելով քա-
ղաք, ինչ որ մի գործով մտա Բու-
նիաթյաների խղճուկ և անփառունակ իշե-
մանատունը: Այստեղ ապաստանում էին
Պարսկաստանի Խոյ և Մարաղա քաղաքնե-
րից եկած պարսիկ արհեստավորները, ո-
րոնք վաճառքի համար կոպիտ բրդից թա-
ղիքներ և կլոր թասակներ էին պատ-
րաստում: Իշնանատանն իմ ուշադրությունը
զբավեցին եվրոպական տարագ հագնված եր-
կու երիտասարդներ: Մտածեցի՝ գուց սրանք
էլ պարսիկներ են, որոնք եկել են իրենց հայ-
րենակիցներին ետսովիլան և այստեղ մի քա-
նի օր մնալուց հետո, պիտի Տփիսիս կամ մի
այլ քաղաք ուղևորվեն: Այսուամենայնիվ, իմ
հետաքրքրությունը շարժվեց: Ուղիղ գնացի
մտա ան հյուզատունը, որտեղ քիչ առաջ
տեսել էի երկու ինձ համար անծանոթ մարդ-
կանց: Ողջոնեցի: Նրանք հարգանքով ոտքի
ելան և բարեկցին հայերեն: Միմյանց ձեռք
սվինք, ծանոթացանք իմ առաջին հարցին՝
թե ո՞ւմ հետ պատիվ ունեմ ծանոթանալու,
նրանք, ժառանգիր, պատասխանեցին, որ ի-
րենք երիմյան Հայրիկի աշակերտներն են,
եկել են Վանից, որպեսզի զնան Տփիսիս,
Գանձակ, Ղարաբաղ՝ Վարագում հրատարակ-
վող «Արծիկ Վասպուրականի» թերթի համար
բաժանորդներ գոնելու:

Հյուզում նստելու տեղ չկար: Ես, ներո-
ղություն խնդրելով դուրս եկա, ասելով, որ
իսկուն կվերադառնամ: Նրանք երեխ շատ
զարմացան իմ այս անսպասելի երևալու և
անմիջապես դուրս գնալու վրա...: Այնին՝
ես դուրս գալով հյուզից, մի ծանոթ տղայի

ուղարկեցի կառքի հետեւից: Կառքը շուտով
դուն առջև կանգնեց: Ես ներս մտա և նբանց
հրավիրեցի կառք նստել՝ մեզ մոտ հյուր տա-
նելու նպատակով: Նրանք շմերժեցին: Օտա-
րականներից մեկը Գարեղին Սրվանձտյանն
էր, իսկ մյուսը՝ Հաջի Միքայելը: Կառքը
շարժվեց դեպի Կոնդի դարիվերը: Ճանա-
պարհին ես զիտել տվեցի, որ նրանք ան-
հարմար տեղում են իշնաներ: Կառքը եկավ
և կանգնեց մեր երկնարկանի տան դռն
առջև: Ես հյուրերին ներս տարա մեր լոթ
սենյակից բաղկացած բնակարանը, կահա-
վորված եվրոպական և ասիական կահակա-
րակեպու ու արդուզարդու: Ես նրանց ցույց
տվեցի մեր դահլիճը և նրան կից մի սեն-
յակ, որտեղ դրված էին մահճակալներ, իսկ
պատերի և հատակի վրա փոփած ու կախ-
ված պարսկական գորգեր, և խնդրեցի մեզ
մոտ մնան այնքան ժամանակ, ինչքան նրանք
երևանում են լինելու:

— Ահա՝ և ձեր պատվին արժանի ննջա-
րանը, — ասացի ես:

Իմ հյուրերի ուղախությանը սահման չկար:
Գարեղին Սրվանձտյանը լրշամիտ և ծան-
րաբար անձն էր, իսկ Հաջի Միքայելի երե-
սից ծիծաղն ու ժպիտը շին պակասում:

Երեք օր նրանք մնացին մեզ մոտ և հյու-
րասիրվեցին: Ես նրանց տարա իմ մի քանի
ծանոթ բարեկամներիս մոտ այցելության:
ամեն տեղ պատշաճ պատիվ ցույց տրվեց
նրանց: Երեք օրից հետո, հյուրերս ճահա-
պարհվեցին: Բայց նախքան հեռանալը, Գա-
րեղին Սրվանձտյանը իմ մաւու նրիմյան
Հայրիկին գրեց մի շատ սիրուն նամակ և
միջնորդեց ինձ ընդունելու Վարագա Ժա-
ռանցավորաց վարժարանը որպես աշակերտ:
ինձ խոստացան, որ վերադարձին կրկին



ԽՐԻՍՏՈՆ ՀԱՅՐԻԿ

կանցնեն Երևանով, կվերցնեն ինձ և կճանապարհվենք Թափրիզ—Մալմաստ—Վան ճանապարհով դեպի Վարտա:

Այդպես էլ եղավ: 1860 թվականի ամռանը նրանք Ղարաբաղից եկան Ագուշիս, իսկ այդտեղից Հին-Նախիչևանի վրայով՝ Երեվան: Ինձնից շատ գոհ մնացին, երբ տեսան, որ ես «Արծիվ Վասպորականի» համար բավականին բաժանորդներ եմ ճարել և բաժանորդագրման գումարները կանխիկ ստացել:

«Արծիվ Վասպորականի» բաժանորդագրությունը բավականին հաջող էր ընթացել Դանձակոմ, Ղարաբաղում և Ագուշում:

Երևան վերադառնալիս, նրանք ամաշել էին կրկին մեզ մոտ կանգ առնել, իշխաննել էին մի անշուրք բյուրանոցում, որը, համեմատաբար, ավելի պատվաբեր էր, քան Բունիաթյանների կեղտում իշխանատան ցած ու խոհավ հյուղը:

Սրվանձտցանը և Հաջի Միքայելը, հենց

2. ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

1860 թվականի օգոստոս ամսի սկզբին, Սրվանձտցանի և Հաջի Միքայելի հետ որոշել էինք փոստային սայլակով ուղարկել դեպի Ֆուլֆա, բայց երբ լսեցինք, որ երևանցի հայտնի վաճառականներից մոտ ութ հոգի փորդուններով են գնալու մեր ճանապարհով, վանեցի մի վաճառականի հետ մենք էլ մի փորդուն վարձեցինք և պատրաստվեցինք ժանապարհվելու Մերոնք, հորեղբորս հետ, Դարաշիշակի Ալափարս գյուղը ամառանոց էին գնացել, ուստի, մինչև ճանապարհվելս, պետք էր, որ գնայի մերոնց մոտ հրաժեշտ տալու: Եվ ահա, ձիով Երևանից վաղ առավոտյան դուրս գալով, հասա Ալափարս: Հորեղբայրս, իմանալով իմ մտադրությունը, հափանություն շտվեց, խորհուրդ տվեց, որ ես հետ կանգնեմ Վան գնալու մտադրությունից, բայց ես համառեցի Երբ տեսավ, որ էլ ճար չկա, իր մոտ ունեցած 100 ուրբլուց 80-ը տվեց ինձ, և ես վերադարձա նորից Երևան:

Ալափարսից վերադառնալու հաջորդ օրը, դեռ լուսար շրացված, Երևանի Գյուրջի կողման իշխանատից ճանապարհ ընկանք և երեկոյան դիմ աղայիշակագ հասանք Դավալու գյուղը, որը գտնվում էր Երևանից 40 վերստ Հեռավորության վրա: Այնուհետև մենք անցանք Հին-Նախիչևան, իսկ այնտեղից՝ Զուլիքա: Հաջորդ օրու Զուլիքա լաստառադատով անցանք Մայր Արարատի առաջնակությունը և տրվեց ճաշկերությ մի թյուրք հաջու արգում, ստվերակիտ սոսու տակ: Գարեգին Սրվանձտցանը և Հաջի Միքայելը, իրենց շատ ազդու և ճարտար ատելանապոտթյամբ, հոգիվայրանք առաջացրին ժողովրդ մեջ Կազմակերպվեց ընդհանուր հանճանակություն և տրվեց ճաշկերությ մի թյուրք հաջու արգում, ստվերակիտ սոսու տակ: Գարեգին Սրվանձտցանը և Հաջի Միքայելը, իրենց շատ ազդու և ճարտար ատելանապոտթյամբ, հոգիվայրանք առաջացրին ժողովրդ մեջ Կազմակերպվեց ընդհանուր հանճանակություն և տրվեց ճաշկերությ մի թյուրք հաջու արգում, ստվերակիտ սոսու տակ:

Իրենց վերադարձի օրը, եկան ինձ մոտ այցելության:

Վերադարձի այդ այցելության միջոցին, Գարեգին Սրվանձտցանի առաջին նոսքը եղավ այն ավետավոր լուրը՝ թե գեռևս Ղարաբաղում, ի պատասխան իր կողմից գրած գրության, Խրիմյան Հայրիկը հայտնել է իրեն, որ ինձ ընդունում է սովորելու Վարագա գառանգավորաց դպրոցը: Այդ ասելով, Սրվանձտցանը ծոցից հանեց Հայրիկի խամակը, ուր ասված էր մոտավորապես հետեւյալը: «Երանին թե մեզ մոտ ալ գտնվեր հարուստ մը կազարյան տոհմին պես, որ ընծայաբերեր այնպիսի գումար մը, որ մենք ընդարձակելով մեր Վարագա դպրոց, ի վիճակի ըլլայինք Ռուսաստաննեն, Պարսկաստաննեց, և այլ Վայրերն աշակերտներ ընդունի...»: Այնուհետև Սրվանձտցանը պատմեց, թե իրենք ինչ սիրածիր ընդունելություն են գոել իրենց այցելած Վայրերում, առավել և Ղարաբաղում:

ԵՐԵՎԱՆԻՑ ԴԵՊԻ ՍՍԼՄԱՍ

անցնել Թափրիզ, Գիշերը անցկացրինք Մարանդայում, որը բավականին կոկիկ քաղաք էր: Այստեղ կային խաղողի արգիսեր, տանձ, կարմիր խնձոր, ձմեռուկ և այլ պատղներ:

Հաջորդ օրն առավոտյան դուրս եկանք և ճաշից քիչ անց, արդեն Թափրիզում էինք: Իօւանեցինք խանի իշխանատանը: Օգոստոսի 15-ին, Աստվածածնա վերափոխման տոնին, գնացինք եկեղեցի, շապիկ հագանք, երդիցինք: Ժողովրդի մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ: Պետք է ասել, որ Հաջի Միքայելը շատ լավ բարիտոն էր և դուրեկան ձայնուերը: Այդ օրվա մեր ժամաներության մասնակցելը, մանավանդ երբ իմացան, որ ընկերներս երիմլան Հայրիկի աշակերտներից են, եկել են Թափրիզ, որպեսզի Սալմաստի վրայով գնան Վան, մեծ հետաքրքրություն առաջացրեց ժողովրդի մեջ: Կազմակերպվեց ընդհանուր հանճանակություն և տրվեց ճաշկերությ մի թյուրք հաջու արգում, ստվերակիտ սոսու տակ:

Թափրիզում, տաս օր վայելելով տեղի հասարակության կողմից ցուց տված սիրալիք հյուրասիրությունը, վերջապես, սրտառուզ զգացմոնքներով, բաժանվեցինք: Վաճառականներից մի խումբ, ուստի եկել էր Անդրկովկասի տարբեր քաղաքներից, եկավ մեզ ճանապարհելու մինչև Ղալա:

Ղալայում երկար շմացինք: Հաջորդ օրը առավոտյան, մինչ մենք թեյի բաժակները առաջներիս խմում էինք, նկատեցինք, որ

դիմացի թյուրք գյուղի կողմից դուրս եկան մի քանի երիտասարդներ, որոնք մտազրադ առաջ էին գալիս դեպի մեզ: Սրանք թվով հինգ հոգի էին: Մեզ առաջնորդող թյուրք շավլադարը¹, որը շահել մարդ էր, ինքն ևս նկատելով դեպի մեզ եկող երիտասարդ թյուրքիրին, մոտեցավ մեզ և ցածրաձայն զգուշացրեց, որ այդ եկողները օրինավոր մարդիկ չեին, ապա դառնալով ինձ, ասաց.

— Աղա՛, հենց որ նրանք մոտենան, որ ինձ վրա բարկացի՛ր և մի երկու ապտակ էլ հասցրո՛ւ երեսիս և ուստեղն ինձ մի լավ հայհոյի՛ր...:

Այդ առաջարկը ինձ համար թե՛ հասկանալի եկավ և թե՛ շատ գործեկան, և երբ մեզ հետապնդող այդ թյուրքիրը, 15—20 քայլ հեռու կանգնած, դիտում էին մեզ, ես հանկարծ վեր թռնելով տեղից, ոտաերեն հայհոյելով, մեր թյուրք շավլադարին երկուերեք ապտակ հասցրի, այնպես, որ խեղճ մարդու փափախը նույնիսկ վայր ընկավ գետին:

3. ՍԱԼՄԱՍԻՑ ԴԵՊԻ ՎԱՆ—ՎԱՐՍԻՑ ՎԱՆՔ

Մեզնից շաբաթներ առաջ ֆուրտոնով Սալմաստից դուրս էին եկել մի ուղիղ խոմք մարդիկ, որոնց, լսեցինք, տեղի գորդերը ճանապարհին թալանել էին և քանի որ այդ նույն քարավանի հետ գտնվում էր և մեր ճանապարհի նախակին ընկեր վանեցի վաճառականը, հետեւապես նա էլ էր թալանի ենթարկվել:

Մեզնից անտեսանելի մի սարկավագ, ճանաչելով Գարեգին Սրվանձտյանին և Հաջի Միքայելին, տեսնելով նաև իրեն համար անծանոթ մի երիտասարդի՝ ինձ, մի քառորդ ժամ շուտ վանք հասնելով, հայտնել էր մեր գալստյան մասին, և մինչ մենք, ձիերիս սանձը բռնած, ոտքով բարձրանում էինք Վարագալեռան սիրով, կանաչազարդ ու ծաղկում դարիվերը, հանկարծ, մեզնից անսպասելի, Վարագա Ժառանգավորաց վարժարանի մի ամբողջ խոմք, 30—40 հոգի, խնդրելի թյամք, շրջապատեցին Սրվանձտյանին և

Թյուրք երիտասարդներն այս պատկերը տեսնելով, մեր շավլադարին իրենց մոտ կանչեցին և սկսեցին հարցուփորձ անել, թե այդ ովքե՞ր էին, որ համարձակություն ունեցան Պարսկաստանի մեջ մուսուլմանին ապտակել և հայհոյել: Մեր պատվական ձիապանը, որին Հասան էին կոչում, երկյուղածությամբ ասում է, որ իրեն ծեծողը և հայհոյողը ուսաց դեսպանի եղբորորդին է, որը գնում է Սալմաստ:

Երակի իմ շնկ մաղերս, կապուտ խաժ աշշերս և եկորպական հագուստս նրանց մեջ ո՛չ մի կասկած չթողեցին և նրանք շուտով մեզանից հեռացան:

Այդ գիշեր, շնորհիվ մեր ձիապանի բարեկամության և խելացի տնօրինության, մենք անփորձ ու համգիստ քնեցինք, յայլած գտնվում էինք մի վայրի դաշտում: Հետևյալ օրը համանք Սալմաստ և իջևանեցինք տեղի եկեղեցու երեցփոխի տանը, որը Խրիմյան Հայրիկի լավ ծանոթն էր և մեզ մեծ սիրով ընդունեց:

Հաջի Միքայելին, որոնք նրանց ուսուցիչներն էին:

Գարեգին Սրվանձտյանի և Հաջի Միքայելի հետ նրանք գրկախառնվում էին որպես երկար ժամանակ ծնողներին շտեսած երեխաներ: Սրվանձտյանը, ցանկանալով ինձ ևս անմասն շթողնել այդ ուրախությունից, մի առ մի ինձ ներկայացրեց իր աշակերտներին, որոնք քաղցրությամբ մոտենում էին, և շնայած իմ բուռն դիմադրության, քաշելով ձեռքս համբուրում:

Աշակերտներից անմիջապես հետո, մեզ ընդառաջեցին ուսուցիչներ Մեսրոպ և Եղիկի վարդապետները, Մելքոն վարժապետը: Վերջինս, իր հասակի կարճության պատճառով, Հայրիկից ստացել էր «Պարթև մականունը»: Նրան բոլորը «պարտն Պարթև» էին կանչում:

Վանքի մոտիկ մեզ ընդառաջեց մեր պաշտելի Խրիմյան Հայրիկը, վիթխարի հասակով, շագանակագույն թագ մորուքով, արծվի քթով, կաթնագույն կաշվով, շատ գրավիչ և դուրեկան արտաքին տեսքով մի անձնա-

1. «Ձավլադար» — ձիապան, որն ապրանքի բեռ է փոխադրում:

վղրություն, որի գեղեցկության նկարագիրը իմ գրիլը դժվարանում է տալ: Ես մոտեցա Հայրիկին և, չնայած նրա մնադիմագրությանը, ջերմորեն համբուրեցի առը, ասելով:

Անցյալ տարի (1859 թվականին) Երեւանից հատկապես Տփիլս եկա Զեղ տեսնելուց հետո այդպիս ըլլա, համբուրե՛, — ասաց Հայրիկը:


լու, Զեր ազը համբուրելու նպատակով, բայց այդ միջոցին Դուք մեկնած էիք Տփիլսից Գանձակ, Ղարաբաղ. այժմ իմ վաղեմի բաղդանը կատարվեց:

— Բողոք այդպիս ըլլա, համբուրե՛, — ասաց Հայրիկը:

4. ՎԱՐՍԳԱ ՎԱՆՔԸ

Խրիմյան Հայրիկը հիմնելով Վարագա վանքը ժառանգավորաց վարժարանը և հրատարակելով «Արծիվ Վասպուրականին», նպատակ ուներ նոր լուս սփոռել Հայաստանի առաջ խոր անկյունի վրա:

Բարձր, առատահոս մի աղբյուրի մոտ: Վաճառքի գիմաց, ավելի քան 350 դեսիմետրի², քիչ թեք զաշտավայր էր տարածվում, իսկ հանդեպ՝ Վանա կապուտակ լիձը, որն ահագին եկամուտ էր տալիս վանքին:



Վարագա վանքի ընդհանուր տեսարանը

Խսկապես ասած, Վարագա վանքը, իր ճարտարապետական տեսքով, մի առանձին շքեղություն շտաներ ո՛չ ներսից և ո՛չ էլ դրսից, ինչպես ունեին Ս. Հովհաննու վանքը Մադեկարի (Կեշառուի), Ս. Գրիգոր և Ս. Նշան եկեղեցիները, Հայրատի և Սանահինի վանքերը կուռի գավառում և այլն: Բայց Վարագա վանքի դիրքը հիանալի էր: Նա գտնվում էր մոտ 2.500 ոտնաշափ ծովի մակերեսից

Սիրուն ծառատունկ պարտեզը, վանքի շուրջը գտնվող շենքերը և պարիսպը, նորոգված յոթր ավերակ մատուների քարերից, քիչ թե շատ բարեկարգություն էին տվել վանքի արտաքին կաղմածքին:

2. «Դեսիմետրին» — տարածության ռուսական չափ է, որը հավասար է 1,093 հեկտարի:

5. ՎԱՐԱԳԱ ԴՊՐՈՑԸ

Վարագա դպրոցը, որը երկնարկանի միշտ էր, կառուցված էր պարիսպներից դուրս: Նա ուներ 30 կանգուն ճակատ, 20 կանգուն լայնություն և մոտ 10 կանգուն բարձրություն, միշտ է շափավոր լուսամուտներով:

Ենքը իր մեջ պարունակում էր երկու ընդուրակ Դահլիճ և մորկու սենյակ: Ներքին հարկում տեղավորված էր ննջարանը, հասարակ մահճակալներով, անբարեզարդ և անպաճույզ անկողիններով, իսկ վերին հարկի դահլիճներում գտնվում էին նստարաններ և դրատախտակներ: Այստեղ պատերին կախված էին աշխարհագրական քարտեզներ և բնագիտության վերաբերյալ մի քանի պլակատներ: Ենքի ճակատին, ներքին հարկի դեպի արևմուտք գտնվող սենյակում գտնվում էր հանդերձարանը, իսկ վերին հարկի նույնպես արևմտյան սենյակում գտնվում էր պրադարանը, որտեղ ապակյա դռներով պահարաններում դրված էին գրեթե: Այստեղի մի անկյունում դրված էր վենետիկում տրաված մի մեծ երկրագունդ (զլորուա): Ինչ վերաբերում է դպրոցում դասավանդելի առարկաների բաշխմանը ուսուցիչների մեջ, այդ հետեւալ կերպով էր կատարվում: Կրոնի և բարոյագիտության դասերը ավանդում էր երիմյան Հայրիկը, Հայոց լեզուն և պատմությունը՝ Գ. Սրվանձտյանը, աշխարհագրությունը՝ պարուն Մելքոնը, թվարանությունը և բնագիտությունը՝ Մեսրոպ վարդապետը, եկեղեցական շարականագիտության առարկան՝ Նենիկ վարդապետը, վայելակուրության և գծագրության առարկան՝ Հաջի Միքայելը: Վերակացուի պարտականությունը տրված էր եղբայր Արտակին, որը դեմքով մի շատ ծաղրածու անձն էր, բայց զրուցաներ էր և ուներ լավ բնավորություն, միշտ զվարթ և ուրախ տրամադրության մեջ էր: Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ, ևս տեղավորվեցի Գարեգին Սրվանձտյանի սենյակում, որտեղ դրվեց մի փայտյա մահճակալ լավ անկողինով: Այդ սենյակում կային մի սեղան, երկու աթոռ, մի պատի ժամացուց, սեղանի մի փոքր հայելի և մի անշնորհք պահարան գրեթե համար:

Ես պարապում էի սենյակում, իսկ վար-

ժարանի դասերին երբեմն-երբեմն ունկընդուրում: Աշակերտական խոմբը միշտ այն կարծիքին էր, թե ես եկած եմ Ռուսաստանից, որպեսզի դասավանդեմ ուսուաց լեզու և սպասում էին, թե ե՞րբ պետք է սկսեմ պարապմունքները: Բայց, նախ որ ես ուսուաց լեզվին այնշատ չէի տիրապետում, որ կարողանայի դասավանդել և երկրորդ, եթե նույնիսկ կարողանայի պարապել, դա այն ժամանակ վուանդավոր էր՝ Օսմանյան կառավարությունը հետապնդում էր:

Իմ Վարագ գալստյան մեկ տարին բոլորեց եկավ 1861 թվականի սեպտեմբեր ամիսը: Նախընթաց 60-ական թվականին, Մուշի նահանգի հայ ազգաբնակչությունն իր մելիքներով, տանուտերներով և Ս. Կարապետի հոչակառուր վանքի միաբանությամբ, մի առանձին հանրագրությամբ դիմել էին Կոստանդնուպոլսի Ազգային ժողովին և պատրիարքին ու թախանձագին խնդրել, որ երիմյան Հայրիկին իրենց վիճակի վրա առաջնորդ կարգեն և միաժամանակ Ս. Կարապետ վանքի վանահայրը նշանակեն: Թե՛ Պատրիարքարանը և թե՛ Ազգային ժողովը չէին կարող մերժել Մուշի ժողովովի խնդրը, նամանավանդ, երբ Կոստանդնուպոլսից ավելի քան 15—20 հոգի մարդիկ միշտ Պատրիարքարանի գաները լցված, իրենց ճնշումն էին գործադրում պատրիարքի և կրոնական ու Ազգային ժողովների մլուա:

Մի բարի օր, մշկցի երեք պատգամավորներ Վարագ եկան՝ բերելով թե՛ Ազգային ժողովի վճիռը և թե՛ պատրիարքի կոնդակը:

Շատ ակտուում եմ, որ «Մասիս» օրաթերթի առաջնորդող հոգվածը՝ երիմյանի Մուշի առաջնորդ նշանակվելու մասին, պահած շոնեմ, ուր տեսնեիք թե ի՞նչ աստիճանի մեծ համակրությամբ և սիրով էր լցված Մուշի ժողովուրդը գեպի երիմյանը: Այդպիսով, Մուշ գնալու և Ս. Կարապետ վանքի վանահայրության հարցը լուծված էր: Հայրիկը, Գարեգին Սրվանձտյանի, Հաջի Միքայելի և եղբայր սարկավագների հետ միասին, պետք է ուղևորվեր Մուշի Ս. Կարապետի վանքը: Մնում էր ինձ ևս կողմնորոշվել՝ մնալ Վարագում և նրա ժառանգավորաց

վարժարանում, թե՝ այդ հեռացող խմբին միանալ և գնալ Ս. Կարապետ։ Բայց չէ՝ որ Վարագում փոքրիշատե կանոնավոր դպրոց կար իր ուսուցիչներով, իսկ Ս. Կարապետում ամեն ինչ նոր պետք է կազմակերպվեր Խրիմյան Հայրիկի՝ նոր առաջնորդի միջոցով։ Սակայն ինքս իմ մեջ մտածում էի եթե իմ նպատակը լիներ ավելի ուսում և գիտություն ձեռք բերելը, չէ՝ որ այդ նպատակին հասնելու համար, ինձ պետք չեր վան-Վարագ ճանապարհվել, չէ՝ որ նույնը կարելի էր ձեռք բերել Երևանում կամ Տփիսում, բայց չէ՝ որ ես եկած եմ Վան-Վարագ՝ Խրիմյան Հայրիկին աշակերտելու, նրա հայրենասիրական և վառ աղքասիրական շնչով մնվելու, նամանավանդ, որ Գարեգին Մրվանձտյանի ընտիր արժանիքները տեսնելով, նրանից օգուզում էի։ Ուստի և իմ այս մտքերը հայտնեցի Մեսրոպ վարդապետին։ Նա իր կողմից հայտնել էր Հայրիկին, որը հավանություն էր ավել և ես, այդպիսով, միացա Մուշ գնացողների խմբին։

Խրիմյան Հայրիկի՝ Ս. Կարապետ վանքի վանահոր և Մուշի վիճակի առաջնորդի պաշտոնում նշանակման լուրը տարածվելով, Վանի մի քանի հայտնի ամսձինք, որոնց թվում նաև Վանում հայտնի Շարա բեկը և տեղի առաջնորդը եկան Հայրիկին հրաժեշտի տեսակցության և այստեղ պատշաճ հյուրընկալություն և հյուրասիրություն գտան։

Մեր ճանապարհվելուց մի քանի օր առաջ, Հայրիկին ինձ ասաց։

— Պարո՞ն Նահապետ, չե՞ք ցանկար արդյոք Վան քաղաք գալ և մեր Այգեստան տեսնել ու նորին վերադառնալ։

— Ամենայն սիրով և ուրախությամբ, — պատասխանեցի մե ժպտադեմ։

Հայրիկը հրամայեց իր ձին պատրաստել և վանքի մի ծառայի հետո դնելով և մի նա-

մակ էլ թերլեմեզյան Մկրտիչ աղայի վրա դրելով, մյուս օրը ճանապարհ դրեց ինձ Վան։ Այստեղ, Վանում, ինձ ամենից շատ զուր եկավ Այգեստան արվարձանը, որն ամենից ընտիր թաղն էր։ Վանում ես իջևանեցի Մկրտիչ աղայի տանը, որն ինձ ընդունեցի սիրալիր։ Նախաճաշից հետո նրա հետ միասին գնացինք քաղաքը շրջագայելու Մկրտիչ աղան միակ մարդն էր, որը շերմ սիրով սիրում է հարգում էր Խրիմյան Հայրիկին և նյութական կարիք ունեցած միջոցին, փոխարինաբար և կամ հենց այնպես բացում էր իր առատաքաշի քսակը և օգնում իր պաշտելի Հայրիկին։

Կարծեմ, հենց այդ ճանապարհորդության համար, Մկրտիչ աղան 150 ոռուրու շափ դրամ տվեց Հայրիկին, գիտենալով, որ մշեցի պատգամավորների բերած դրամը շիրավարից։

Եվ, այսպիսով, 1861 թվականի սեպտեմբեր ամսի 15-ին, մենք պատրաստ էինք ճանապարհ ընկնելու։ Նախքան այդ, Հայրիկը վանական և դպրոցական կառուվարման համար մի հիանալի կանոնադրություն էր գրել։ Նա եկավ դպրոցի դահլիճը, ուր վաղորոք դրված էր բազկաթոռ, նստեց ու սկսեց կարդալ կանոնադրությունը, ապա տալով այդ Մեսրոպ և ծզնիկ վարդապետներին ի գործադրություն, ոտքի կանքնեց և հիշեց Փրկչի այն խոսքը, որն ասել էր նա Երուսաղեմի վերնատան խորհրդավոր ընթրիքի ժամանակ իր աշակերտներին։ «Կացցէք յիս և ես ի ձեզ»։ Այս խոսքերը Հայրիկն արտասանեց այնպիսի զգացմունքով, որ ամենքը հուզվեցին և արտասվեցին...։ Դրանից հետո, ամենքը մոտենալով Հայրիկին, համբուղեցին աշը և արտասուզը աշքերին ճանապարհ դրին գեպի Ս. Կարապետ։

(Շարունակելի)